

ՇԱՂԿԱՊԱՎՈՐ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀՈՄԱՆԻՇ
ՐԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՄԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Ն. ԲՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՌՈՒԱՆԴ ԱՎԵՏԻՍՏԱՆ

Բարդ ստորադասական նախադասության կասկածման եղանակներից է շաղկապովոր կապակցությունը: Կասկածման այս եղանակի դեպքում բարդ նախադասության բաղադրիչ մասերը միմյանց հետ կապվում են ստորադասական շաղկապներով կամ հարաբերական բառերով: Պարզ է, որ որոշակի բնույթ ունեցող երկրորդական նախադասությունները կարող են կասկածվել որոշակի շաղկապներով: Քիչ են այն շաղկապները, որոնք կարող են միաժամանակ կասկածել տարբեր բնույթի երկրորդական նախադասություններ: Ինչպես միայն ու շաղկապն է, որը կարող է օգտագործվել գրեթե բոլոր բնույթի երկրորդական նախադասությունների կասկածման դերով: Այստեղից բխում է, որ ստորադասական շաղկապները երկրորդական նախադասությունների կասկածման դեպքում ունեն սահմանափակ հնարավորություն: Պայմանի շաղկապները կարող են կասկածել պայմանի, ժամանակի շաղկապները՝ ժամանակի պարզա երկրորդական նախադասությունները և այլն: Սակայն, երբ որևէ շաղկապ կասկածում է այնպիսի երկրորդական նախադասություն, որտեղ երկրորդական նախադասության և շաղկապի արտահայտած քերականական իմաստները տարբեր են, ապա ստեղծվում են այդ շաղկապների սպտադործման սովորական ձևերին զուգահեռ կառուցվածքներ: Նման դեպքում թեև չի փոխվում երկրորդական նախադասությունների բնույթը, սակայն նրանց միջև հանդես են գալիս նրբիմաստատյին կամ ոճական տարբերություններ՝ մեկ ընդհանուր իմաստի պայմաններում: Այսպես՝ Եթե դու կարող ես, ուրիշին մի խնդրի՝ նախադասության առաջին բաղադրիչը պայմանի պարզա երկրորդական նախադասություն է, որը կասկածվել է եթե պայմանի շաղկապով: Բայց այդ նախադասությունը մենք կարող ենք կասկածել նաև երբ հարաբերական դերանվամբ, որը կարող է շաղկապի դեր կատարել: Երբ դու կարող ես, ուրիշին մի խնդրի: Երկրորդական նախադասությունների բնույթը երկու դեպքում էլ նույնն է, սակայն վերջին նախադասության մեջ իմաստային տեսակետից կա մի հավելյալ՝ ժամանակային երանդ, որը բացակայում է առաջինի մեջ: Այդպիսի նախադասությունները միմյանց նկատմամբ շարահյուսական հոմանիշ նախադասություններ են, որովհետև թվանդակային պլանում նրբիմաստատյին տարբերությունները կապվում են մեկ ընդհանուր իմաստի հետ, արտահայտության պլանում՝ շարահյուսական նույն իմաստը ունի քերականական արտահայտության տարբեր ձևեր:

Շարահյուսական հոմանիշ կառույցներ են առաջանում նաև այն ժամանակ, երբ նույն երկրորդական նախադասությունը կասկածվում է միևնույն տեսակի տարբեր շաղկապներով: Ինչպես՝ Եթե կարող ես...||Եթե կարող ես:

Մեր նպատակն է ցույց տալ, թե նմանօրինակ հումանիշ նախագաստությունները ի՞նչ դեր ունեն Շ. Թումանյանի ստեղծագործության մեջ:

ա) Պայմանի պարագա երկրորդական նախադասությունների նմանիշություն.— Հայտնի է, որ ժամանակակից հայերենում բուն պայմանի հարաբերությունն արտահայտող և այդպիսի երկրորդական նախադասություններ կապակցող ամենից տարածված շաղկապը եթե-ն է: Այս շաղկապի օգտագործումը հեղինակային որևէ վերաբերմունք չի ենթադրում. այն կարելի է որակել որպես չեզոք ոճի շաղկապ: Օրինակ՝ «...Եվ եթե մի օտառ մարդ լինեք, կկարծեք, թե ամաչեցին» (3, 21)¹: «Սրա հետ միասին, եթե նվագելիս քները բարձրացնում է—ձենը ազատ ու լիահնչյուն է տարածվում, իսկ եթե քներն իջեցնում է, կայցնում է մարմնին, թևի ձենը խլանում է...» (3, 104) և այլն: Այսպիսի օրինակներ հիմնականում հանդիպում են արձակ ստեղծագործությունների մեջ, հատ ու կենտ նաև՝ չափածոյում, «Եթե ամուս մեջքիս մընաս, Ոտըդ դրենես ասպանդակին, Մինչև մեկել ոտըդ շուռ տաս, Կըհասցրենիմ ասավ սև ձին» (1, 175) և այլն:

Եթե շաղկապով կապակցված երկրորդական նախադասություններ Շ. Թումանյանի ստեղծագործության մեջ համեմատաբար քիչ են, Պատճառն այն է, որ, ինչպես ասացինք, այդ շաղկապի մեջ սուբյեկտիվ վերաբերմունքի տարրը պակաս է արտահայտված: Դրա փոխարեն հեղինակը պայմանի պարագա երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցում է թե, թե ու, միայն թե, ու. դե ու շաղկապներով, ինչպես նաև երբ դերանվամբ²: Սակայն այս շաղկապների օգտագործման հաճախականությունը նույնպես հավասար չէ: Հեղինակի ստեղծագործության մեջ պայմանի իմաստով օգտագործվող ամենից լայն գործառական շրջանակ ունեցող շաղկապը թե-ն է: Այս շաղկապն այնքան է տարածված Շ. Թումանյանի ստեղծագործության մեջ, որ այն կարելի է համարել բանաստեղծի ոճի տարբերակման հատկանիշ: Թե-ից հետո իրենց օգտագործման հաճախականությամբ աչքի են ընկնում թե ու, ու շաղկապները, ապա՝ մնացածները:

Պայմանի իմաստով այսպիսի շաղկապների օգտագործումը Շ. Թումանյանի ստեղծագործության մեջ ինքնանպատակ չէ: Դրանց մեջ բանաստեղծը զգացել է նրբիմաստային և ոճական տարբերություններ: Եվ իսկապես, եթե բուն պայմանի հարաբերությունն արտահայտող շաղկապի նկատմամբ նրբիմաստային տարբերություններ չեն ցուցաբերում միայն թե, դե ու շաղկապները և երբ հարաբերական դերանունը, իսկ մյուսները՝ ոճական (իհարկե, ոճական տարբերություններ կան նաև նախորդ շաղկապների մեջ): Այսպես՝ միայն թե շաղկապը պայմանի հարաբերությամբ օգտագործելիս եթե-ի համեմատությամբ նախադասության մեջ, պայմանի հարաբերությունն արտահայտելու հետ մեկտեղ, մասնավորեցնում, զիջական երանգով սահմանա-

¹ Հոմերոսի «Ուլիսեսի վերադարձը»-ի 1-4, Երևան, 1969, Այստեղ և այսուհետև տեքստում փակագծերի մեջ նշված առաջին թվանշանը ցույց է տալիս հատորը, իսկ երկրորդը՝ համապատասխան էջը:

² Նկատի ունենալով այն հանգամանքը, որ երբ-ը ցուցաբերում է կապակցման համընդհանուր արժեք և շաղկապային իմաստ արտահայտելու միտում ունի (Գ. Գաբրիելյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963, էջ 294), ուստի նպատակահարմար է այդ դերանունը քննել շաղկապների հետ:

փակում է՝ այդ պայմանիւ Օրինակ՝ «—Ին, որ կուզես՝ առ տա՛ր, ամա՛ն... Միայն թե զբոս մեր խնդն ազգին» (1, 160): Եթե շաղկապով կապակցվելիս պայմանի պարագա երկրորդական նախադասութեան մեջ արտահայտվում է զրիւալոր նախադասութեանից բխող ընդհանուր պայման, իսկ այս դեպքում (միայն թե-ով կապակցվելիս) այդ պայմանը մասնավորեցվում է և ավելի ընդգծվում:

Հ. Թուփանյանի ստեղծագործութեան մեջ հաճախ հիշյալ շաղկապը օգտագործվում է առանց թե-ի՝ միայն ձևով: Այս դեպքում ևս նախադասութեան մեջ նշված իմաստը պահպանվում է: Օրինակ՝ «—Դու եղիր, ասա՛վ, մեր գլխի տւր... Միայն մեր Եփէր փառաբանող շանես Ու փաղըն աչքով մեզ մըտիկ անես» (1, 150):

Պայմանի հարաբերութիւն արտահայտելիս նրբիմաստային տարբերութիւնը առաւել ընդգծված է արտահայտվում, եթե պայմանի պարագա երկրորդական նախադասութեանից բխող կապակցվում են երբ հարաբերական դերանվաճ: Այս դեպքում պայմանի հարաբերութեան հետ մեկտեղ բացահայտորեն ընդգծվում է հիշյալ դերանվան արտահայտած ժամանակային նրբիմաստը: Օրինակ՝ «Ինձ մի ըսպանիր, ինձ թող էս անգամ. էլ չես սիրիլ ևս, երբ դու չես ուզում» (1, 90): «Սերն ու սիրտն էլ երբ չըկա՝ Կրկն ընկանք, դու՛ր ընկանք» (2, 261): «Երազգիրքը չի կարելի Տալ ապառիկ ոչ մի հատ... (Ի՛նչ ապառիկ, երբ մի բանի Մուշտաբի կա այսօր շատ)» (2, 336—337) և այլն: Օրինակներում նշված նրբիմաստի առկայութեան ուսումնարար պայմանավորված է երբ-ի բուն իմաստով, որտեղ ժամանակային իմաստը այնքան ցայտուն է, որ պայմանի հարաբերութեան արտահայտելու դերով էլ դրսևանում է դարձյալ չի վերանում:

Եթե-ի նկատմամբ նրբիմաստային տարբերութեան է ցուցաբերում նաև դեռ որ լաղադրյալ շաղկապը: Այս շաղկապով կապակցվելիս պայմանի պարագա երկրորդական նախադասութեան մեջ, մեղ հետաքրքրող իմաստի հետ մեկտեղ, արտահայտվում է գործողութեան կատարման հաստատականութեան երանդ: Սթե շաղկապով արտահայտվում է զուտ գործողութեան կատարման պայման, իսկ դեռ շաղկապով նշվող իմաստի հետ՝ ընդգծվում, հաստատվում է տվյալ նախադասութեանը նախորդող նախադասութեանների հիմնական միտքը: Այսպես՝ «Աղքատի պատիւը» պատմվածքում, որտեղ հերոսը, շնայած մարդկանց թախանձանքին, հրաժարվում է հաշտվել Սանդրոյի հետ, տառապանքը ասում է. «—Դե՛ որ չես ուզում, վկաներդ բեր, գործը շարունակում եմ» (3, 20): Ընդգծված նախադասութեանը հաստատում, մի անգամ ևս ընդգծում է նրան նախորդող մտքերի բովանդակութեանը: Այդ նույն ձևով՝ «—Դե որ չկա՝ Ի՛նչ անենք... Գնանք, քեռի խնչան» (3, 91): «—Դե որ գնաս աւառու մոտ,— խնդրեց դայը,— ասա մի սոված գալլ կա...» (3, 147) և այլն: Այս շաղկապի մեջ նրբիմաստային տարբերութեան հետ մեկտեղ առկա է նաև ռճական տարբերութեան: Սա ավելի շատ ժողովրդախոսակցական բնույթ ունի և օգտագործվում է հերոսների խոսքերում:

Հ. Թուփանյանի օգտագործած, մնացած՝ թե, թե որ, որ շաղկապները եթե-ի և միմյանց նկատմամբ ցուցաբերում են լոկ ռճական տարբերութեանը: Այսպես՝ թե շաղկապը պայմանի հարաբերութեան արտահայտելիս ավել-

լի շատ խոսակցական բնույթ ունի: Սա օգտագործվում է այն հերոսների խոսքում, որոնք հասարակ ժողովրդի ներկայացուցիչներն են. և դրանով հեղինակը աշխատում է հասնել նրանց խոսքի տիպականացմանը, հարազատ մնալ ժողովրդի լեզվամտածողությանը: Օրինակ՝ «Թե լալիս ես՝ վարդ ես ուզում՝ Մալիս կըգա, մի քիչ կաց, Թե լալիս ես՝ յարդ ես ուզում. Բան չեմ վասնա գոնաց...» (1, 99): «Թե տանուտերին գանգատ եմ գնում. Ա՛խ. նա զրնաց. տակում բացի դուժմանից» (1, 68): «—Աղա, քե դու էն կագեքինն ես ասում. ...էդ պարապ բան ա, կազեթումը սուտ ու մուտ բաներ շատ են գրում» (3, 15) և այլն: Ինչպես բերված օրինակներից երևում է, քե շաղկապով կապված նախադասությունները բացառապես հերոսների խոսքերում են, դա հաստատում է այդ շաղկապի ժողովրդախոսակցական բնույթ ունենալը:

Պայմանի հարաբերությունն արտահայտելիս ոճական նույնպիսի արժեք ունեն նաև քե որ և որ շաղկապները: Այսպես՝ «Ինչն է ինձ տանջում, քե որ իմանա...» (1, 37): «—Թե որ ձեռներս էլ մի բան է ընկնում. Զենք կարողանում բերան հասցընենք» (1, 64): «Քու հերն ու մերը քե որ ինձ չբառն. Արին կըթափեմ ես գետի նրման» (1, 76): «—Թե որ կեղտոտ բանն ուզում չեմ, դե դատաստան արեք» (3, 19): «—Ի՛նչ անեմ, ինձնից նա ազիդ հո չի՛. Ես որ մեռնում եմ, թող նա էլ կորչի...» (1, 266): «Մին էլ որ գա ու ոպառնա. Մի՛ վախենա, քըշի գընա» (1, 272): «—Որ քեզ մի քանի քաղաք ցորեն տամ, կարո՞ղ ես հասցնել Շորագյալ...» (3, 13) և այլն: Վերջին օրինակում հեռավոր ձևով զգացվում է նաև ժամանակային երանգ:

Այսպիսով, պայմանի պարագա երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցելիս գրողը երբ շաղկապից բացի օգտագործել է նաև այլ շաղկապներ, որոնց առկայության դեպքում այդ նախադասությունները պայմանի հարաբերությունն արտահայտելիս միմյանց նկատմամբ ցուցաբերում են նրբամաստային (եթե, միայն քե, դե որ շաղկապներով կապակցվելիս) և ոճական (եթե, քե, քե որ, որ) տարբերություններ:

բ) Ժամանակի պարագա երկրորդական նախադասությունների հոմանիշություն.—Այսպիսի նախադասությունները Հ. Թումանյանի ստեղծագործության մեջ գլխավորի հետ կապակցվում են, երբ հարաբերական դերանվամբ՝ երբ որ, եթե, մինչև որ, մինչև, հենց, հենց որ, որ, քանի, քանի որ, քե չէ, ինչ շաղկապներով, որոնք իրենց թե՛ իմաստային և թե՛ գործառական շրջանակներով համահավասար չեն:

Ժամանակային իմաստով օգտագործվող այս շաղկապները կարելի է բաժանել մի քանի խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են երբ դերանունը, երբ որ շաղկապը, որոնք հեղինակի ստեղծագործության մեջ առավել տարածված են: Այս երկուսն էլ ժամանակային իմաստը դրսևորում են ընդհանրապես, առանց սահմանափակման, այսինքն՝ սրանց օգտագործմամբ երկրորդական նախադասությունների արտահայտած ժամանակային սահմանները անբոշ են, չմասնավորված: Օրինակ՝ «Երբ միտք էր անում, երկընթից հանկարծ՝ Մի հուր-հրեղեն հայտնվեց քաշին» (1, 149): «Երբ ինը ամիս, ինը ժամն անցավ. Առյուծ-Մըհերը զավակ ունեցավ» (1, 149): «Մի օր էլ Գիլորը երբ մուշտաբի էր կանչում՝ դիմացից կրկու գյուղացի դուրս հկան» (3, 50): Օրինակներում երկրորդական նախադասությունների արտահայտած ժամանակների մեջ սահմանափակ որոշակիություն չկա, դրանք ցույց են տալիս ժամանակ՝ ընդհանրապես, թեև նրանցով կապակցված երկրորդական նախա-

բառաբանությունների բառ-ստորոգյալներով արտահայտված գործողությունները ժամանակաշին իմաստով կարող են և՛ նախորդել գլխավոր նախադասության բառ-ստորոգյալով դրսևորված գործողությանը, և՛ հաջորդել, և՛ կատարվել նրա հետ միաժամանակ: Մյուս կողմից՝ երբ-ի գործածության համախականությունը և՛ ժամանակակից գրական լեզվում, և՛ Հ. Թումանյանի ստեղծագործության մեջ անբուն մեծ է, որ ան ձեռք է բերել լեզուք ոճում օգտագործվելու նշանակություն:

Իմաստալին նմանօրինակ յուրահատկություն է ցուցաբերում նաև երբ որ շաղկապը: Առաջին՝ «Երբ որ տեսան շրնորհի չունեմ, ... Տերտերության տըվին խորհուրդ» (1, 123): «Բայց հիսի, երբ որ եկավ ծերացավ, էն անահ սիրտը ներս սողաց մի ցավ» (1, 148): «Երբ որ տեսավ ձին կանգնեց, Անդրին ճանապարհից դուրս եկավ» (3, 9) և այլն: Այս շաղկապը, սակայն, նախորդ՝ երբ-ի նկատմամբ ցուցաբերում է ռճական տարբերություն: Սա ավելի հակված է իրասկզպան լեզվում օգտագործվելու և ժողովրդախոսակցական երանգ ունի: Երբ որ-ը հանդիպում է նաև համադրական կազմությանը, որը նախորդի նկատմամբ որևէ էական տարբերություն չի առաջացնում. «Ներքո լարվելիս է եղել արփին, ... Դիմացը կանգնած ես շատ եմ դիտել» (2, 118), կամ «Ներքո օտրկի շողֆն արևի, Հաց կրքերի մեր ապին» (2, 129) և այլն:

Ժամանակալին իմաստ արտահայտող շաղկապների հաջորդ խմբի մեջ կարելի է դասել նևնց, հենց որ, թե չէ, ինչ, ինչ որ շաղկապները: Այս շաղկապներով կապակցված ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում արտահայտված ընդհանուր իմաստը, նախորդ խմբի նկատմամբ, հանդիմ է նրան, որ գլխավոր նախադասության բայ-ստորոգյալով դրսևորվող գործողությունը սկսվում է անհիջապես այս նախադասությունների բայ-ստորոգյալներով դրսևորված գործողություններից հետո: Նրբեմն՝ դիտվող և երկրորդական նախադասություններում նշվող գործողությունները ժամանակալին հաջորդականությամբ մոտենում են: Օրինակ՝ «Ու հենց շողաց ցոլֆն արևի՝ Անտես, անհետ չքացան» (1, 74): «Հենց մոտեցան, նրկատեցին, Ծափ ու խընդում ընդհատեցին» (1, 164): «Գիշերը լուսնի երկշոտ շողերը Հենց որ մրանում են էն խավար ձորը՝ ... Ոգի է առնում ամեն բան էնտեղ» (1, 29—30): «Հենց որ իմացավ՝ էլ Մըհեր չըկա, Վեր կացավ կրովով Սասունի վրա» (1, 150): «Նայեց թե չէ, զգաց՝ իր մեջ Տասը գոմշի ուժ պակասեց» (1, 172): «Ձայն տվեց թե չէ՝ դուրս եկան կողքին» (1, 229): «—Տավարիցը մինը զոռաց թե չէ, ամբողջ տավարը հասկանում է բանն ընչումն է» (3, 112) և այլն: Թե չէ շաղկապով կապակցվող բարդ նախադասությունները կառուցվածքային յուրահատկություն ունեն. երկրորդական նախադասությունը միշտ նախադաս է ըլնում, իսկ շաղկապը՝ երկրորդական նախադասության վերջում⁴:

Այս խմբի մեջ մտնող ինչ և ինչ որ շաղկապները որոշ չափով տարբերվում են նախորդներից: Սրանք ժամանակալին սահմանները այնքան խստություն չեն նշում, ինչպես նախորդները: Այլ կերպ ասած՝ եթե նախորդները միմյանց նկատմամբ ռճական տարբերություն են ցուցաբերում, ապա սրանք՝ նաև խմաստային: Ուրեմն՝ սրանցով վապակցվող երկրորդական նախադասությունները նախորդների նկատմամբ համանիշներ են, իսկ իրար նկատ-

⁴ Հմմտ. Գ. Լ. Գարեգինյան, նշվ. աշխ., էջ 317:

մամբ՝ նույնանիշներ: Օրինակ՝ «...Թե էն օրվանից, ինչ զու գնացել ես՝ մեր տանը դեռ կրակ չի վառվել» (3, 307): «Այն օրից, ինչ որ նրան թաղեցին, այլևս խընդալ չեմ կարենում» (2, 156) և այլն: Հետաքրքրական է, որ սրանք արտահայտում են ժամանակի կոնկրետացումներ:

Մինչև, մինչև որ, ֆանի, ֆանի որ շաղկապներով կապակցվող ժամանակի պարագա երկրորդական նախադասությունները կարելի է առանձնացնել երկրորդ խմբի մեջ: Սրանց առկայությամբ երկրորդական նախադասությունները ձեռք են բերում ժամանակային տեղանկություն⁵, մի բան, որը չկար նախորդների մեջ: Սակայն տեղանկությունը բոլորի մեջ նույն մակարդակի վրա չի գտնվում: Այսպես, ֆանի և ֆանի որ շաղկապներով կապակցվելիս գլխավոր նախադասության մեջ դրսևորվող գործողությունը իր կատարման հիմքով կապվում է երկրորդական նախադասության մեջ նշվող գործողության հետ: Եվ գլխավոր նախադասության մեջ նշվող գործողությունը կարող է հարատևել այնքան, որքան որ՝ երկրորդական նախադասության մեջ դրսևորվող գործողությունը: Կարճ ասած՝ բաղադրիչ գլխավոր և երկրորդական նախադասությունների դրսևորած գործողությունները զուգահեռաբար հարատևում են: Օրինակ՝ «—Բեղը ծիլ-ծիլ, բոյը թիլ-թիլ էն յարի, Ի՛նչ դարդ ունեմ ֆանի նա կա աշխարհի» (1, 83): «Փանի լուսեղեն ֆու հերը դեռ կար, ...Ես շատ եմ էնտեղ որսի միս կերել...» (1, 156): «Ասի, ֆանի ուզքը ֆոթուկումն է, վեր կենամ կորչեմ» (3, 64): «Ու ֆու շրվաֆում ֆանի որ մեմֆ կանֆ, Քու ծառան լինենք, քու խարջը միշտ տանք» (1, 150): «Ու միշտ, ֆանի որ կա Շան ու գերի, ըստուկ ու տեր, Չի լինելու երկրի վերա Ոչ շիտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր» (1, 311): «—...Փանի որ նա կա՝ ընչից ես վախենում. վեր կաց» (3, 95):

Մինչև շաղկապով կապակցվող ժամանակի պարագա երկրորդական նախադասությունները նույնպես արտահայտում են տեղանկություն: Սակայն այդ տեղանկությունը երբեք չի համընկնում գլխավորի հետ: Այդ նախադասությունների մեջ նշվող գործողությունները ժամանակային իմաստով միշտ ինչ-որ չափով ուշանում են գլխավոր նախադասության բայ-ստորոգյալի դրսևորած գործողությունից: Օրինակ՝ «...Աջն էլ մինչև շուտ տար վրան, Կանգնեց Սասմա սարի գլխին» (1, 175): «Շունը մինչև գրնաց, եկավ, Ուստա Կատուն կոտորն ընկավ» (1, 223): «Մարդ մինչև կարողանար մառնել, թե այս մենակ ձին կորած կամ փախած պետք է լինի, դուրս եկավ և տերը...» (3, 7) և այլն:

Մինչև շաղկապի նման կիրառություններից պետք է տարբերել նրա այնպիսի կիրառությունները, որտեղ այդ շաղկապով կապակցված երկրորդական նախադասություններն արտահայտում են ժամանակային չափի իմաստ (այնքան ժամանակ): Այս իմաստով այդ նախադասությունները շփման հզոր են ունենում մինչև որ շաղկապով կապակցվողների հետ և նրանց նկատմամբ հանդես են գալիս որպես շարահյուսական հոմանիշներ՝ տարբերվելով լոկոմոտիվ հանդեսներից: Օրինակ՝ «Պարում է ձմեռն հարսանիքներում, Կամ մեծավորի թեփի է լիզում, Մինչև մի ֆանի շանի է նարում» (1, 69): «Էլ չեմ իջնի ես Մարութա սարից, Մինչև չըջինեմ մեր վանքը նորից» (1, 158): «Վազում, վազվողում ըստվերների պես, Մինչև որ մեմակ մի մարդ կըգրտենե»

⁵ Հմմտ. Մ. Արևիկյան, նշվ. աշխ., էջ 635:

(1, 34): «Հիշում է միտքը աղոթքի տված... Մինչև որ յուր մոտ կրկանէ աստված» (1, 49) և այլն:

Ժամանակի պարադա երկրորդական նախադասութիւնները Հ. Թուման-
յանի ստեղծագործութեան մեջ գլխավորի հետ կապակցվում են նաև որ շաղ-
կապով, որը երբ-ի հետ հանդես է գալիս հավասար հաճախականութեամբ:
Այս գեպում ժամանակային իմաստի հետ ընդգծվում է նաև գործողութեան
կատարման փաստը, մյուս կողմից՝ այսպիսի կառուցներն աչքի են ընկնում
նաև իրենց խոսակցական լինելու երանգով: Այսպես՝ «էն ի՞նչ է հապա, որ
տեղն եմ մրտնոմ՝ Հեկեկում ես դու գիշերվա մթնում» (1, 90): «Որ կան-
չեց, նրա ձենից հաւովոր զրդորդը մըդմբոցն ընկավ սար ու ձոր» (1, 151—
152): «Որ հրացանիս լուիցը բռնեց, ես էլ կոթը պինդ բռնեցի» (3, 62): «Որ
ֆառալին դեմ էլավ, մին էլ տեսա ետ դառավ, թուրը հանեց» (3, 76): «Մի-
ծեռնակը դատարկ կատվին որ տեսավ, մի գիլ ծղրտաց ու թռավ իջավ դի-
մացի ծառի ճյուղին» (3, 79) և այլն: Ինչպես երևում է բերված օրինակներից,
երկրորդական նախադասութիւնները առաջադաս դիրք ունեն, որը նույնպես
նպաստում է գործողութեան կատարման փաստի ընդգծմանը, որովհետև մեր
ուղեղում սկզբում առաջանում է երկրորդականի մեջ նշվող գործողութիւնը,
ասլա՝ գլխավորի:

Հետաքրքրական է, որ բանաստեղծի ստեղծագործութիւններում, թեև ոչ
հաճախ, բայց հանդիպում են եթե շաղկապով կապակցված ժամանակի պա-
րադա երկրորդական նախադասութիւններ: Օրինակ՝ «Իսկ եթե տեղից վեր
կացավ հանկարծ, Դըլուխը մեխած մահակը ձեռին՝ ...էնժամ կիմանաս, թե
ընչի համար» (1, 31): Ընդգծված նախադասութիւնը կապակցված է եթե
դայմանի շաղկապով, որը այս կապակցութեան մեջ արտահայտում է ժամա-
նակային իմաստ, իսկ երկրորդական նախադասութիւնը՝ ժամանակի պա-
րադա երկրորդական նախադասութիւն է: Այդ բանը մի անգամ ևս հաս-
տատվում է գլխավոր նախադասութեան էնժամ բառով, որը կարծես
մասնավորեցնում, նշում է կոնկրետ ժամանակը: Սակայն ժամանակի
դարադա նմանօրինակ երկրորդական նախադասութիւններում ժամանակա-
յին ընդհանուր իմաստի հետ նուրբ ձեռք ընդգծվում է պայմանի հարաբերու-
թիւն, որը բխում է կապակցող շաղկապի էութիւնից:

Այսպիսով, ժամանակի պարադա երկրորդական նախադասութիւններ
կապակցող շաղկապները Հ. Թումանյանի ստեղծագործութեան մեջ առավել
առատ են, որոնք միմյանց նկատմամբ գտնվում են և՛ նույնանիշ, և՛ համա-
նիշ հարաբերութեան մեջ:

դ) նպատակի պարադա երկրորդական նախադասութիւնների հոմանի-
շութիւն. — Հայտնի է, որ ժամանակակից հայերենի ամենատարածված՝ նպա-
տակի իմաստ արտահայտող շաղկապները հիմնականում որպեսզի-ն և որ-ն
են:

Գեղարվեստական գրականութեան մեջ թեև առավել տարածված է որ-
պեսզի շաղկապը, սակայն այն խոսքի ռճական գունավորում չի պարունա-
կում: Սա չիղք ոճի շաղկապ է, սրանով կազմված խոսքը միապաղաղ է, հան-
դիսավոր, լուրջ առանձին քնարականութիւնից: Թերևս այդ է պատճառը, որ
Հ. Թումանյանը իր գեղարվեստական խոսքում այդ շաղկապով կապակցված
և ոչ մի նախադասութիւն չի օգտագործել (համեմայն դեպս, մեր ուսումնա-
սիրութեան ընթացքում այդպիսիները չեն հանդիպել):

Որ շաղկապով կապակցվող ձևերն իրենց մեջ պարունակում են նպատակային ձևով ստեղծված ոճ: Այս շաղկապը, օգտագործվելով ժողովրդական սակցական լեզվում, ավելի է ընգարձակում ոճական գունավորման իր նշանավորությունները, և խոսքը գառնում է ավելի հուզիչ, պատկերավոր: Այդ է հաստատում Հ. Թումանյանի ողջ ստեղծագործությունը, որտեղ որպեսզի շաղկապի փոխարեն առատորեն օգտագործված են որ շաղկապով կապակցված, նպատակի իմաստ արաստատող բաղմաթիվ նախագասություններ: Օրինակ՝ «Վեր կացավ Մոսին. իրեն կրտրատում,— Թող դա՛, գոռում է. որ բրոնեն և ուրիշ» (1, 88): «Նա դո՛ւ էր ուզում սիրուն աղջիկներ, Որ ջուր բաց թողնի ծառավ աշխարհին» (1, 141): «Ոսկին պահել եմ Մեղիքի համար. Որ փաղցր լինի աչքը մեզ վրա» (1, 163): «Հիմի նա օլորում է, ուզում է կոտորի, ես օլորում եմ, որ քենց անեմ ծերը վրեն ընկնի, հույս ասում...» (3, 62) և այլն:

Հետաքրքրական են նաև նպատակի իմաստ արաստատող այն երկրորդական նախագասությունները, որոնք կապակցված են քե, քե որ ստորագասական շաղկապներով: Այս կառույցներում խոսքի ոճական տարբերությունների հետ պարզորոշ ղգացվում են նաև ասելիքի նրբիմաստային տարբերությունները: Օրինակ՝ «Չարշարվեց, բոթուկը պոկեց ու, ոնց որ մարդը խտրաի, խտրտեց, բերավ քե վրես գցի» (3, 64) և «...խտրտեց, բերավ, որպեսզի վրես գցի»: Առաջին օրինակում մինչև գործողության կատարվելը կարծես անփափաք հաշի է առնվում գործողության կատարման հետևանքը և, արդարև, ստեղծվում է նշվող հակադրություն, իսկ երկրորդ դեպքում այդ բանը բառակալում է: Կառուցվածքային տեսակետից էլ այսպիսի ձևերի օգտագործումը հարազատ է Հ. Թումանյանին, որովհետև րանաստեղծը, ելնելով ժողովրդականության հասնելու ձգտումից, միշտ խոսափել է երկարաշունչ արտաստություններից ու բառերից: Իսկ քե շաղկապը իր հնչյունների քանակով անհամեմատ ավելի պակաս է որպեսզի-ից:

СИНОНИМИЧЕСКИЕ СОЮЗНЫЕ СЛОЖНОПОДЧИНЕННЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ В ПРОИЗВЕДЕНИЯХ ОВ. ТУМАНЯНА

РОЛАНД АВЕТИСЯН

Резюме

Одной из форм конструкции сложноподчиненных предложений являются союзные предложения, где придаточные предложения соединяются подчинительными союзами или союзными словами (относительными местоимениями).

В произведениях Ов. Туманяна чаще всего встречаются синонимы придаточных предложений обстоятельств условия, времени и цели с разными союзами. Такое разнообразие союзов вытекает из того, что большой мастер художественного слова в придаточных предложениях широко пользовался стилистическими богатствами языка. Поэт в сложноподчиненных конструкциях такого характера склонен к употреблению союзов, наиболее характерных для языка и мышления народа.